



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՎԱԹՍՈՒԽԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Վ Ա Զ Գ Է Ն Ծ Ա Ռ Ա Յ Յ Ի Ս Ո Ւ Խ Ի Բ Ր Ի Ս Տ Ո Ս Ի,  
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵԻ ԿԱՄՈՔՆ ԱԶԳԻՍ  
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,  
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՄԱՁԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՈՈՅ  
ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԵ ԷԶՄԻԱԾՆԻ

ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԿԵՌՈՇԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ,  
ՑԱՐԳԱՐԺԱՆ ՇՐՋԱՆԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆՑ ԵԻ ՄԱՍՆԱՇԻՒՂՈՑ  
ԵԻ ՀԱՄԱՅՆ ԲԱՐԵՍԷՐ ԵԻ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՋՏ ԱՆԴԱՄՈՑ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ,  
Ի ԳԱՀԵ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՌՈՐԴԻ  
ԵԻ Ի ԳԱՀԱԿԱԼԻ ՆՈՐԻՆ ՈՂՁՈՒՑՆ ԵԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Քաներորդ դարը հայ ժողովուրդի կեանքին վրայ բացուեցաւ նախախնամական ընծայով մը: 1906 թուականին նեղոսի արևոտ ափերուն ծնունդ սուարի գործի նույրուած հայկական կազմակերպութին մը, զոր լացաւ ու գլխաւորեց մեծ սրտի տէր պայծառատես հայ մարդ մը՝ Պօղոս Նուպար, իր նման ազնի հոգիներու անմիջական գործակցութեամբ:

Անցնող վաթսուն տարիները կը վկայեն, թէ սոյն կազմակերպութինը եղաւ հարազատօրէն հայկական, ճշմարտապէս բարեգործական, համազգային իմաստով ընդհանուր, եղբայրական սիրով գոտեալինդ միութին մը, իբրև առաջնորդող ոգի ունենալով քրիստոնէական գործի գեացումը և հայ ժողովուրդին ու հայրենիքին նեցուկ հանդիսանալու գիտակցութիւնը:

Հայկական բարեգործական ընդհանուր միութինը ծառայութեան և զոհաբերութեան ուխտ մըն է, որ ահա վեց տասնամեակներէ ի վեր կը գործէ:

Բայ ժողովորդի ծոցին մէջ ամէն տեղ: Այս ամբողջ ժամանակաշրջանին, Բայ ազգային կենքին մէջ չկայ կարևոր ու բախտորոշ իրադարձութիւն մը, շինարար մէծ ձեռնարկ մը՝ կրօնական, կրթական կամ հայրենասիրական, որուն կենսագործման, ամբողջապէս կամ մասամբ, օժանդակական չոլլայ Հայկական բարեգործական շնորհանոր միուրեան բարի ձեռքը, գիտակցական հասարակութեամբ մեր ժողովորդի անցեալէն մեզի հասած ժուանգործեան և անյաջը հատաքով անոր ներկայի ու ապագայի նկատմամբ:

Այսպիսի միուրեան մը կոչուած է յաւտ ապրելու, վասնիքի ան կը մարմնաւորէ հայ ժողովորդի ապրելու, գոյառնելու և ստեղծագործելու վակերական կերպերէն մին, ու կը գործէ հայ ժողովորդի յաւրժութեան համար:

Ս. Էջմիածնէն, իիր Հայոց Հայրապետ, անհուն միփառութեամբ կը շնորհաւորենք ու կ'օրինենք Հայկական բարեգործական ընդհանուր միուրինը և իր բոլոր բարեւել անդամները և անոր կենդրունական վարչութեան իմաստուն և ազնուասիրո դեկապանելոր՝ հայցելով բոլորին համար Աստուծոյ օգնականութիւնը, որպէսզի նոյն ոգիով, նոյն եռանդով և նոյն արդինաւէտուցեամբ շարունակեն իրենց բարեգործական առաքելութիւնը մեր ազգային կեանքէն ներս, հետզհետէ առակ համախմբելով երիտասարդ ու կենտունակ ուժեր և հետզհետէ առակ տարածելով իրենց կենարար հովաննին Սփիրոի հայութեամ լայն զանգուածներուն վրայ:

Ամէն հայու նուիրական պարտքն է գնահատել Հայկական բարեգործական ընդհանուր միուրեանը ու զօրավիզ կանգնիլ անոր, ամրակուն ու անսամ պահել զայն և սատարել բարդապէս և նիթապէս անոր ազգաշէն աշխատանքին:

Ուշին և յարգանք և հայրեապետական օրինութիւն Հայկական բարեգործական ընդհանուր միուրեան, անոր երշանկայիշատակ հիմնադիրներուն, անոր վայսունամեայ փառաւոր գործունելութեան և անոր ներկայ հմաստուն ու անձնուէր դեկապարութեան:

Թող ապրի, զօրանազ ու բարգաւաճի բարեգործութեան կոչուած հայոց մէծ կազմակերպութիւնը՝ ի փառ հայ ազգի բարոյական հանձնարի:

«Ապունեւու զօրացարուք Տերամբ, և կարողութեամբ զօրութեան Նորա. և զգեցարուք զապառազինութիւնն Աստուծոյ» (Եփես. Զ 10—11), և «Ենքն Տեր մեր Յիսոս Քրիստոս և Աստուծ և Հայր մեր..., միփարեսց զիրոս Ձեր և հաստատեսց յամենայն բան և գործ բարդութեան» (Բ. Թեսաղ. Բ 15—16):

Ամէն:

*Արքայի գրի նշ*

ԽԱՅՐԱԳՈՅՑ ՊԱՏՐԻԱՐք ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուալ կոնդակ ի 1-ն յունուարի

1966 Փրկչական ամի,

և ի տումարիս Հայոց ՌՆԺԵ,

ի մայրավան Սրբոյ Էջմիածնի:

